ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ · Nº 5. HENTCHAK 25 ՄԱՅԻՍ (Հ. Տ.) 1893

ՀՆՉԱԿ

"ALEA JACTA EST."

Սուլթանի մոլեգնած կառավարութիւնն իր ultima ratio-ն (վերջին բանականութիւնը) թէեւ վաղուց է գտած, բայց նրա միջոցների մէջ սակայն նորակերպութիւններ է մտցնում շարունակ. նա իր խուժանին է գրգռում հայերի դէմ, և այն էլ ոչ միայն կողոպուտի, աւարի, կիների բռնաբարութեան ասպարէզ բանալով նրա համար,—դա արդէն հին բան է,—այլ եւ թիւրք խուժանի արուամոլութեան զզուելի ախտի ու արիւնահոս կոտորածներ անելու բարբարոս կրքերի յագեցման համար նորանոր միջոցներ տալով նրան։ Եթէ թնդանօթը ultima ratio-ն է թագաւորների առհասարակ, սուլթանի ultima ratio-ն է, վերջին հնարագէտ միջոցն է, հայերի վերաբերութեամբ—գրգռել թիւրք խուժանի, մեհմետների ախտաբորբոք կրքերը և նրանց դրդել յարձակումներ անել հայերի վրա։

Անշուշտ, ոչխարների հօտ է համարել նա հայերին, որ նրանց շարունակ մորթել է տալիս։ Այո, ջարդում, այրում, աւերում, կողոպտում են հայ ժողովրդի տունը, կայքը, ինչքը. այո, խարազանում, քարկոծում, կոտորում, սպանում են հայ ժողովրդին. այո, բանտարկում, տանջում, չարչարում, մահացնում են հայերին,—և այդ ամենը սիստեմական կերպով՝ բացայայտ կամ գաղտնի գործադրված բռնակալ սուլթանի ապականված, անբարոյական, աւազակ կառավարութեան ու սրա դող, գազանաբարոյ, կեղեքիչ, կաշառակեր արբանեակների ձեռքով և կամ նրանց հրամանով՝ թիւրք խուժանի միջոցով։

Սուլթանների ամենագլխաւոր թշնամին առհասարակ իրանց յիմարութիւնն է։ Կարծո՞ւմ է արդեօք նա, Համիտ բռնակալը, որ այդ բոլոր չը լսված վայրագութիւններով իրաւի կը մեռցնէ հայկական դատը։ Կարծո՞ւմ է նա արդեօք, թէ հայերից բռնի առած "շնորհակալական" հանրագրեր հնարելով, ինքը կարող կը լինի ջեզուիտական խաբեբայութեամբ Եւրոպայի աչքը հեռացնել Հայաստանում կատարվող արիւնալի արհաւիրքներից ու շարժումներից, որոնք ուշ կամ վաղ, ի վերջոյ կը ստիպեն եւրոպական տէրութիւններին միջամտել մեր դատում։ Բաւական դաս չէ՞ արդեօք նրա համար թիւրքի լծի տակ առաջ ճնշված ժողովրդների ներկայ ազատ վիճակը։ Չը գիտէ՞ նա արդեօք որ, ինչպէս Հայաստանում ներկայումս, նոյնպէս առաջ՝ թիւրք կառավարութիւնների գործադրած բռնութիւններից ծագեց այդ ժողովրդների ազատութիւնը։ Չէ՞ տեսնում նա արդեօք, որ Հայաստանի վիճակն այժմ նոյնն է, ինչ որ Բուլղարիայինն էր իր ազատման նախընթաց օրը։ Նախընթաց օրը... այո, այժմ էլ մենք ենք գտնվում մեր ազատութեան նախընթաց օրը։ Իրերի հիմակւայ վիճակը Հայաստանում և նրանց բնական ընթացքն է մեզ տանում դէպի ազատութիւն, և նրանք, որոնք կարծում են, ինչպէս սուլթանը, թէ հազարաւորներ բանտարկելով, աքսորելով, կը վերջանայ հայ յեղափոխականների թիւը, նրանք կոյր են, նրանք չեն տեսնում հայ ժողովրդային միլիոնաւոր ընդհանրութեան, որը յեղափոխական է իր կեանքի յեղափոխական վիճակի շնորհով։

Իսկ այդ բոլորից յետոյ դեռ ասե՞լ, թէ ինչո՞ւ են հայ յեղափոխական կուսակցութիւնը և՝ նրա առաջնորդութեամբ՝ հայ ժողովուրդը պատրաստվում ընդհանուր ապստամբութիւն անելու համար. ինչո՞ւ են յեղափոխական տէռօր բարձրացրել, սպանելով դաւաճաններ, մատնիչներ, լրտեսներ. ինչո՞ւ ասպատակային խմբեր են հանում լեռները, զէնքով ինքնապաշտպանութեան դիմում, կռւում, յեղափոխական շարժումներ անում մերթ այստեղ, մերթ այնտեղ, մի տեղ յաղթելով, միւս տեղ նահատակվելով ազատութեան համար, և միշտ յեղափոխական ոգով կրթելով ժողովրդային ընդհանրութեան, լինելով օրինակ։ Կարո՞ղ ենք միթէ մենք, յեղափոխականներս, և մեզ հետ հայ ժողովուրդն այդպիսի ընթացք չունենալ, երբ ամբողջ ժողովրդին անխնայ կերպով տանջում, կեղեքում, կոտորում են ամեն-մի քայլափոխում։ Ի՞նչպէս. պղծում են հայ ժողովրդի ընտանիքները, մորթում են նրա երեխաներին, աւերում, հրդեհում են նրա տները, գիւղերը, քաղաքները, մատնում են նրան վերջին ծայր թշուառութեան, կոտորում են նրան հազարներով, չարչարում, մահացնում են նրան բանտերում, վերջին հաշւով, արգելք լինում նրա պատմական ձգտումների իրագործման, շահերի բարւոքութեան, նրա զարգացման ու առաջադիմութեան,—և այդ բոլորից յետոյ դեռ ասե՞լ, թէ ինչո՞ւ է նա յեղափոխականներիս հետեւում, շարժումներ անում, կռւում, պատրաստվում ապստամբվելու... Ամօթ կը լինէր նրան, եթէ այդպէս չանէր. ամօթ կը լինէր նրան, եթէ հընազանդ մնալով ստրկական բնազդներին և հաշտվելով միշտ վտանգալի, միշտ հարստահարված, միշտ ճորտական, միշտ դժոխային մի վիճակի հետ, իր՝ աշխատութիւնից կոշտացած՝ ձեռքով չապտակէր բռնապետական կառավարութեան երեսը։

Այդ կառավարութեան վայրենի լուծը շատ երկար ժամանակ կրեց նա, հայ ժողովուրդը։ Իր կեանքի նոր պահանջները նրան այժմ մղում են դէպի բոլորովին ուրիշ հասարակական-քաղաքական կացութիւն, որը ձեռք բերելու համար յեղափոխականների նախաձեռնութեամբ մղված կուռում նա ոչինչ չունի կորցնելու, որովհետեւ ոչինչ չէ մնացել իրան, և ոչ իսկ իր կեանքը։ Նա գիտէ այժմ մի բան, այն, որ իր, ժողովրդի, կամքը պատմական մեկ անընկճելի ոյժ է, յաղթահարող ամեն տեսակ դժուարութեան, և նախամեծար է համարում՝ լինել մսի մի գունտ սուլթանի թնդանօթների հարուածներից, քան մնալ ծառայ, քան մնալ ստրուկ նոյն այդ ասիական տիրանի։ "Alea jacta est„ — "վիճակը ձգված է„, եւ այլ եւս նրա համար չը կայ տեղիք վարանման, չը կայ համբերութիւն։ Եւ իրան առաջնորդ ունենալով ժողովրդային շահերի ջատագով ճշմարիտ յեղափոխականներին, նա, ժողովուրդը, կը գնայ իր դարաւոր թշնամու դէմ, նա կը գնայ առաջ, նա կը ծածանէ յեղափոխական կարմիր դրօշակը. նա այդ կանէ յանուն իր բարօրութեան ու ազատութեան, յանուն հանրաժողովրդային քաղաքական իրաւունքների ու պահանջների։ Նա չունի երկիւղ ապագայ օրհասական արիւնաշատ, սուրբ մարտից, որտեղ նա ոչինչ չունի կորցնելու, մինչդեռ կը վաստակէ — ամեն բան։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԿՐԿԻՆ ՃԱՆՐ ԴԷՊՔԵՐ Ի ԿԵՍԱՐԻԱՅ.

ԹԻՒՐՔ ԽՈՒԺԱՆԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ։— ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ՁԱՐՁԱՐԱՆՔԸ ԵՒ ԲՈՒՆԱԲԱՐՈՒԹԻՒՆՔԸ։

Պօլսէ, 7 մայիս, 1893.

Ընհասարակ հայկական խնդիրը խիստ ծանրացած է, մանաւանդ Կեսարիայի խնդիրը. միշտ անլսելի կը մնան Կեսարացի հայերի աղաղակները։ Կառավարութիւնը արդէն թէ հեռագրական եւ թէ թղթատարական հաղորդակցութենէ զրկած էր հայերը։ Դոյն անիրաւութենէ չը շատանալով, Կեսարիայէն ծանուցած նորութիւններն սոսկալի են։ Հայ անհատաց վրայ մեծամեծ տուրքեր և դժուարութիւններ կը բարդեն և Հընչակեան յեղափոխական ընկերութենէ անտեղեակ լինելն ապահովելու համար՝ պատուաւոր երաշխաւոր մը կուզեն միշտ։ 80 անձինք որ կուզէին մեկնիլ քաղաքէն կը յետաձգուին ճանապարհորդութենէ։ Ասով կառավարութեան նպատակն է Հայաստանի եւ մասնաւորապէս Կեսարիոյ մէջ հայոց կրած անտանելի չարչարանաց, պատուոյ պղծութենանց, կեանքի անապահովութեան եւ այլ բռնութեանց արձագանքն խափանել եւ կեղծ հանրագրերով Եւրոպական տերութիւնք խաբել թէ "տեսէք, ահա հայոց կողմանէ հանրագրեր՝ ստորագրեալ այսչափ անձնաւորութենէ, որոնք կը հաստատեն, թէ արդարութիւն, հաւասարութիւն եւ խաղաղութիւն կը տիրէ թիւրքիոյ ամէն քաղաք. ինչպէս այսքան տարիներէ ի վեր մենք հայերս հաւատարմաբար հպատակած ենք Օսմ. բարձր տէրութեան, տէրութիւնն ալ այնչափ մեզ կը պաշտպանէ իբրեւ հայր„... Դոյն հանրագրեր տեղապահներու, կուսակալներու միջոցաւ կը գրուին եւ հայերը կանչելով՝ բռնի, ամեն տեսակ սպառնալեաց տակ ստորագրել տալէ յետոյ ուղղակի սուլթանին կուղարկեն. ինչպէս նաեւ Կիլիկիոյ կուսակալը 67 ստորագրութեամբ մի հանրագիր պատրաստած էր հայերուն բռնի ստորագրել տալով։

Խօսենք այժմ Կեսարիոյ նորանոր ծանր դէպքերու մասին։

Կեսարիայի եւ վիճակաց իբր յեղափոխական ամբաստանուած հայ բանտարկեալներէ յայտնի թիւ արձակուեցան։ Սուլթանի այդ "ներման„ որոշման պատճառն այն է, որ նա յիրաւի սկսած է մեծ երկիւղ կրել հայերի գրգռուած տրամադրութենէն եւ Հայաստանի խիստ տագնապալից վիճակէն։ Ջատկի օր Կեսարիայ եւ հասան արձակուածները։ Թուրք խուժանը, որ միշտ գրգռուած է կրօնաւորներէ և պաշտօնեաներէ, շատ կատաղած կերպով ընդունեց նոցա վերադարձը։ Կեսարիոյ օդին մէջ նոր աղէտներու սպառնալիքներ կը թնդային։ Թիւրք խուժանը վերջապէս առիթ մը գտաւ իր կարողութիւնը գործադրելու արձակուածներու եկած օրէն մէկ օր վերջ։

Ջատկի երկրորդ օրն էր. Կեսարիոյ հայեր մի նընջեցեալ կը տանէին գերեզմանատուն և կանցնէին թըքաշատ մի շուկայէ։ Թուրքերը սկսան անարգական ձայներով պօռալ "կեավուր կէպէրիկի կիտիյօր„ (կեավուրի սատակ կերթայ) եւ մօլլայի ձեւով հագնուած մի քանի կառավարական չարագործներու աչքի նշանով մը՝ յանկարծ սկսաւ անձրեւի պէս քար տեղալ հայոց վրայ. քահանային գալիսան մէկ կողմ ընկաւ. սարկաւագը բուրվառը թողլով փախաւ. ժողովրդէն շատերու գլուխն եւ այլ տեղեր խիստ վիրաւորուեցան. ննջեցեալին ազգականք իրենց ննջեցեալն ու լացը մոռցան. ճիչ եւ աղաղակ երկինք կը բարձրանար. կը տիրէր ահագին շփոթութիւն մը եւ սոսկալի "անձրեւով„ ջարդուած հայերը սարսափելի զարհուրանքով ստիպուեցան ննջեցեալը շուկայի մէջ քարէ կարկուտի տակ թողլով՝ փախչելու եւ դիմելու կառավարութեան։ Եւ ինչ. տեղապահը կարեւորութիւն չընծայեր այդ աղէտալի դէպքին, ըսելով "յետոյ կը ստուգեմ գործը„։ Այդ պատասխանի վրայ հայերը կուզեն դիմել սուլթանին հեռագրով. հեռագրատան տնօրէնը կարտաքսէ պարսաւալից խօսքերով։

8-10 տարեկան մի յոյն տղայ խառնակութեան միջոցին ոտնակոխ լինելով՝ գաղաններու քարերուն տակ ի մահ մատնուած է։

Յուսահատ հայերը կը վերադառնան եւ իրենց տարաբաղդ ննջեցեալը մի կերպ լուռ ու անձայն կը տանեն աճապարանօք եւ կը թաղեն։

Յիշեալ սոսկալի քարկոծութեան միջոցին մի քանի հեռատես թուրքեր փութով դիմած են Գալաբօնոս անուն տեղւոյն Պատտալ իւզպաշիին

ոստիկանք հասցնելու ուղելու համար. յիշեալ Պատալն ալ իր արջային ձայնիւ “սապրըղ Թիւրքլէր 4 կիւն տահա տուրամամըլըզ„, այսինքն “անհամբեր Թրքեր, չը կրցաք դեռ չորս օր ևս համբերել„, կը մռմռայ անբաւական։ Ինչ ըսել կուզէր այդ խօսքերով կառավարութեան պաշտօնեան, որ պէտք է խաղաղութիւնը հսկէ, եթէ ոչ այն գաղտնի մտադրութիւնը, որ ունէին Թուրքերը ի մօտոյ կոտորած մը սկսելու հայերու մէջ։

Խիստ մեծ է եղած իւզպաշի աղային սարսափը երբ դառնալով տուն կը տեսնէ, որ դրան քովը հայեր ունկնդիր են իրեն։ Դոյն սպառնական խօսք անմիջապէս տարածուեցաւ քաղաքին մէջ եւ համայն վիճակաց հայերն թէ ահի եւ թէ կատաղութեան մէջ ձգեցին։ Կառավարութիւնն առ երեսս հարց ու փորձի հանեց իւզպաշի աղան։ Իւզպաշին ուրացաւ։ Տեղապահն ուզեց համոզել հայերն, թէ յիշեալն խենթ է. հայերն բողոքեցին ասոր վրայ միւթէսարիֆ էֆէնտիին, որը սաստիկ բարկացաւ եւ մինչեւ անգամ համարձակեցաւ վռնտել հայերն՝ ըսելով “Էյ էրմէնիլէր, արթըք ուզուն էտիյօրսունըզ. սիզի տինլէմէյէ վագթըմ եօգ տըր, չըգըն հուզուրումտան... այսինքն՝ հայեր, այլ եւս երկար կընէք, ձեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ, կորէք ասկէ„։ Ասոր վրայ հայեր ճարահատեալ՝ կուզեն հեռագրաւ դիմել ուր անկ է. բայց ի զուր. հեռագրատան դռներն կրկին իրենց երեսին փակեալ կը գտնուին եւ կը ստիպուին յատուկ մարդով ղրկել հեռագիրն մի մօտակայ կեդրոն։

Երեք ամիս առաջ Կեսարիոյ դժոխաձեւ բանտի մէջ 187 հայ երիտասարդաց կրած տանջանքները, ճրնշումները, բոլոր աղէտները լսա՞ծ էք արդեօք։ Հակառակ “խաղաղութիւն, արդարութիւն կը տիրէ„ խօսքերուն, կառավարութեան անիրաւութիւններն ու գազանութիւնները վերջին ծայր հասած են։ Անտեղի կասկածանօք բանտարկեալ նորատի անմեղ երիտասարդաց տրուած սարսափելի պատիժներու մի քանի կերպերը նշանակենք։

Արսէն էֆէնտի (փաստաբան) եւ իր եղբայր Յարութիւն 4 օր նօթի ու ծարաւ եւ անքուն թողլով, օրը 10-15 սափոր վրան ջուր թափեցին՝ սառնապատ ու ցուրտ եղանակին մէջ։ Յետոյ 2 օր գլխիվայր կախեցին եւ պղծութիւնով քիթն ու երեսը ծեփեցին, պնդելով թէ յեղափոխական գաղտնիքներ ունիս, պատմէ։ Անմեղ թշուառն, “ոչինչ գիտեմ„ կը պատասխանէ. երկրորդ անգամ եռացեալ ջրով լեցուն շիրինկայի նման գործիք երեսանէն ներս հրեցին. թշուառը, իբրեւ ճնճղուկ օձի բերանի մէջ, սրտառուչ կերպով կը սկսի աղաչել ու թախանձել. անլուր կը մնայ, մինչեւ որ կը նուաղի բոլորովին եւ խիստ կը հիւանդանայ։ Այդ վայրենի, սարսափելի տանջանքներն ոչ թէ միայն Արսէն էֆէնտիի տրուած են, այլ 46 պատանեաց եւ 28 դպրոցականաց։ Այդ թիւըք կառավարութեան հնացած ասիական տանջանքներու տակ ոմանք հասած են մինչեւ յիմարական զառանցանքներու եւ ոմանք խելակորոյս եղած են։ Հրէշաւոր չարչարանք մը եւս. 17 երիտասարդ եւ 7 դպրոցական աշակերտք, բոլորը բանտարկեալ պատանիք, գաղանացեալ անասուն մէհմէտներու մէջ կը ձգուին. սոյն մէհմէտք, յորդորեալ ոստիկանութեան կողմէ այդ հայ բանտարկելոց պատիւըն ամենակեղտոտ կերպով կը բռնաբարեն երեք օր շարունակ. . .

Ահա այսպէս են սուլթանի կառավարութեան արդարասիրութիւնքն և հայոց “խաղաղ„ վիճակը։ Չեմ ուզեր երկարել իմ տարաբօթ գոյժեր, որոնք անհամար են։

Սարսափ եւ կատաղութիւն կը տիրէ ամեն հայ տուներու, փողոցներու եւ գիւղերու մէջ այս Լէնկթիմուրեան անգթութեանց պատճառաւ։ Կառավարութեան պաշտօնեայք կաշառք կորզելու համար անմեղ հայերն կանչելով “պարոն, դուք ալ յեղափոխական ընկերութեան մասնակցութիւն ունիք եղեր, ահա ձեր մասին, կուսակալէն եւ տեղապահէն եկած հեռագիրը„, կըսէ եւ կեղծ գրութիւն մը կը ներկայացնէ, եւ երբ խեղճ հայն “ես անմեղ եմ, եւ աղքատ եւ անտարբեր, չեզոք մարդ մը եմ„, ըսելով կաղաչէ, պաշտօնեան. “ուրեմն 20 ոսկի տուր եւ ասկից այսինչ քաղաք փոխադրուէ եւ մի քանի ամիս մի երեւար„, կըսէ. . . վերջապէս մինչեւ 4 ոսկիի կը զիջանի եւ զայն առնելով ազատ կը թողու անմեղ հայն, որ երկրորդէն վախնալով տարագիր կը լինի. . .

Մի քանի օրէ ի վեր Կեսարիայէն կը հասնին մեզ աւելի խառնի խուռն, աւելի շփոթ եւ խիստ ծանրը լուրեր, զորս դեռ չը կրցանք բոլորովին ստուգել. Կը լսուի թէ Թիւրքերն Կեսարիոյ ս. Ած. մեծ եկեղեցին մի կիրակի առաւօտ յանկարծուստ կոխած կողոպտած են և մեծ կոտորած ըրած, 40-50 հայեր մեռուցեր, շատ կանանց վրայէն զարդերն կողոպտեր եւ պատիւներն անգամ բռնաբարեր են։ Էնկիւրիէն եւ դարձող արձակուած բանտարկեալներու տներու վրայ յարձակելով կը ծեծեն, կը ջարդեն, կաւերեն, կը կողոպտեն, պատիւները կը բռնաբարեն, կը մեռցնեն, վերջապէս բոլոր քաղաքն ահ ու սարսափի մէջ կը ձգեն։ Բոլոր շուկաներն կը գոցուին. կառավարութիւն, ոստիկանութիւն, զինուոր կանհետանան. Թուրք խուժանն էր ամենու տէրը, որի մէջ կը տեսնուէին ծպտեալ ոստիկանք եւս... Չենք գիտեր թէ այդ սոսկալի արիւնահեղ դէպքի հետեւանքն ինչ եղաւ. հիմա կը մնամք անտանելի մտածողութեանց մէջ եւ անհամբեր կը սպասեմք աւելի ստոյգ եւ որոշ լրոց, զորս անմիջապէս ձեզ պիտի հաղորդեմք։

Կը լսուի նաեւ թէ Չէլլօ նշանաւոր յեղափոխական ասպատակը բռնուած եւ Էնկիւրի փոխադրուելու միջոցին իր խմբէն 17 ընկերներ՝ տանող ոստիկաններու վրայ յարձակելով և մին սպաննելով՝ կազատեն յիշեալ հերոսը, որ այժմ ալ կը շարունակէ իր սխրագործութիւններն ու ասպատակութիւնները։

ԱՆՀԱՇՏԸ.

Սեբաստիա, 14 ապրիլ 1893.

Արմտան գիւղ եւ իր շրջապատ գիւղեր բոլորովին լքեալ վիճակի մէջ են երկու տարիէ ի վեր և շնորհիւ Լիճք (Ակնայ) գիւղացի մատնիչ հաճի Պետրոսի ունին 30—40-ի չափ բանտարկեալներ, որք Երզնկայ փոխադրուած են։ Արմտանցի հաճի Գալուստ Արխանեան *) քաջ եւ յանդուգն երիտասարդը

*) Տես “Հնչակ„ հինգերորդ տարի, Nr 10։ Ծ. Խ.

որ բաւական մեծաքանակ դրամի տէր մի հարուստ անձի զաւակ է, այլ եւս չը կրնալով տանել Թիւրքական ծանր ու վատթար լուծն, դիւցազնաբար գլուխ քաշելով ելած է լեռը խումբ մը քաջարի երիտասարդաց հետ եւ այնպիսի այր մը ընտրած է իրեն ապաստան, որ կառավարութիւնը չը կրնար ձեռք ձգել այդ անձ։ Հաճի Գալուստի փախստեան ժամանակ Թուրք կառավարութիւնը 50 հեծեալներով շրջապատեց Արմտան գիւղը. աննկարագրելի է գործուած խժդժութիւններն այդ գիւղի վրայ. երեք ամիս շարունակ նեղուեցան այդ խեղճ գիւղացիները։ Այդ ձիերի և մարդկանց համար ուտեստ եւ ամեն ինչ գիւղացիները կը մատակարարէին. քանի՜ քանի՜ բռնութիւնք տեղի ունեցան անոնց կողմէն, Գալուստի պատուէրով քանիցս գիւղացւոց կողմանէ ըսուեցաւ հեծեալներուն Գալուստի տեղը. բայց ոստիկանք չը կարողացան ունենալ այն յանդգնութիւնը, որ երթան ձերբակալելու նորան իր ամրացած վայրը, այլ միշտ կը նեղէին ըսելով, թէ նորան պահած էք այստեղ եւ պէտք է յանձնէք մեզ եթէ ոչ..... հազար ու մէկ սպառնալիքներ ու չը պատմուելիք արարքներ, լկտիութիւններ եւ այլն։

Այդ գիւղացիների արտերը բոլորովին ոտից կոխան եղան, ուտեստն ալ ոստիկանաց համար սպառուած է։

Այդ ժամանակամիջոցին Գալուստը քանի մը տեղ Թուրքերու հետ յաղթական կռիւներ կռուենայ։

Այս գիւղէն է նաեւ Սարգիս անունով քաջասիրտ երիտասարդը՝ վիրաւորուած Նաթանէն Տիվրիկի մէջ՝ դատաստանին առջեւ մի առ մի երեսին զարկաւ ըրած բարբարոսութիւններն եւ խրոխտաբար յայտնեց իր ինչ նպատակի ծառայելը եւ այդ տեղի բանտին մէջ նահատակ մեռաւ։ Այս երիտասարդի մահուամբ Տիվրիկ կորսնցուցած է իր գործիչներու ամենալաւերէն մէկը։ Օր մը այդ երիտասարդին բոլոր քաջագործութիւնները պիտի պատմենք. նորա յիշատակն անմոռաց պիտի մնայ մեր սրտերուն մէջ, որովհետեւ նա իր գործերով մեծապէս նպաստեց Տիվրիկի կողմերու հայ ժողովրդեան ինքնաճանաչութեան արթննալուն։

Լիճք գիւղ (Ակնայ), ասկից ալ շնորհիւ մատնիչ ու զրպարտիչ Պետրոսի 30-ի չափ անմեղներ դատապարտուած կը հեծեն Բաբերդի զնդանին։ Այս հաճի Պետրոս ճիւաղը ժամանակ մը դապղիմալ (հաւաքիչ տրոց) լինելով՝ կլորիկ գումար մը կանցունէ կոկորդը։ Երբ իրմէ հաշիւ կը պահանջուի՝ կը մատնէ գիւղի պատուելին որի քովէն մէկ երկու աննշան նամակներ կը գտնուին. ալ ո՜վ կրնայ պատմել կառավարութեան բերկրանքը. ալ ով որ ուզեն կրնան բանտարկել, հերիք է որ գիւղի մը մէջէն կտոր մը թուղթ գտներ են։ Բինկեան բարեբաղդ է, 3-4 զոհեր միայն ունի։ Ակն ալ 10—15 զոհեր ունի. Նարվէտ գիւղէն երիտասարդ մը կայ. Զիմարայէն 9-ը մարդիկ Սեբաստիոյ զնդանն կը հեծեն որոնց զրպարտիչն է Նատին Յովհաննէս. Տիվրիկ ունի 20-ի չափ. Թեղուտ գիւղէն մէկ քահանայ և 4 աշխարհական Երզնկայի մէջ բանտարկուած են։

Ընկեալները Կիւրինէն Սեբաստիոյ բերին բնիկ կիւրինցի Թորոս Ծառուկեան անուն անձը, որ շղթայակապ բանտ դրուած է։ Ասիկա կամբաստանուի թէ իբր անցեալ տարուայ մէջ Ինկիւրիոյ եւ Սեբաստիոյ լեռները պտտող ապստամբային խմբի մը պետն եւ կամ ընկերներէն եղած լինի, եւ այս անձին իբր ընկեր Հաճի Նշան անուամբ մէկն ալ բանտարկուած է Կեսարիայ։

Սեբաստիոյ բանտին մէջ մեռաւ թունաւորմամբ Եւդոկիացի Պօղոս Նուսուֆեան (հայ կաթօլիկ)։ Այս երիտասարդն Պոլսէն ղրկուած էր այստեղ առանց «Թէվքֆի», որ բանտարկեալ մը անպատճառ պիտի ունենայ։ Գրեթէ երկու ամիսէ ի վեր կը հեծէր բանտի խորշը. ինքը Վենետիկի Ռաֆայէլեան ճեմարանի աշակերտ էր։ Իրեն յանցանքն է նամակի մը մէջ հետեւեալ բառերը գրած լինելը. «կարծեմ այս դարուս վերջերը հայոց յեղափոխութեան պատմական րոպէն է»։ Իր գալէն վերջ բնաւ չը հարցաքննուեցաւ եւ այդպէս թշուառ վիճակի մէջ ազնիւ երիտասարդը հիւանդացած է. բանտապետը եւ այլք կաշառք են պահանջած արգելանոցէն բանտին հիւանդանոցը փոխադրելու իրաւունքը տալու համար. բայց Պօղոսը ստակ չէ ունեցած. Շատ չանցներ բանտապետի հրամանով ոստիկանաց միջոցաւ կը թունաւորուի թշուառ նահատակը եւ անպատմելի խեղճութեան ու տանջանքներու մէջ կը մեռնի իր խոնաւ ու աղտոտ նկուղին մէջ։ Տեսնենք թէ հայ-կաթօլիկաց առաջնորդ Տէր Սահակ Հաճեան պիտի բանակցի կառավարութեան հետ այս ծանր խնդրոյ մասին։ Բժշկաց քննութիւնք կը հաստատեն Պօղոսի թունաւորուած ըլլալը։

Ժամանակէ մը ի վեր նորակերպութիւն մը եղած է Սեբաստիոյ մէջ. այն է գիշերաշրջիկ ոստիկանաց խմբակները սկսած են հայերը կողոպտել։ Գիշեր չանցներ, որ անոնց կողմէն այսպիսի կողոպուտներ տեղի չունենան. ի հարկէ, սուլթանը, գթառատ սուլթանը, Հայաստանի մէջ ամեն բան խաղաղ է կըսէ ու պիտի ըսէ...

Պէտք է խոստովանիլ սակայն որ կառավարութիւնը շուարած է. ուր որ ալ կը դիմէ, ինչ որ ալ կընէ, չը կրնար առաջն առնել այդ ընդհանուր շփոթութեան։ Ժողովուրդն արդէն այնպէս եղած է, որ ամեն մի վայրկեան կը սպասէ օրհասական դէպքի մը եւ յեղափոխական պայքարին։ Կառավարութիւնը կը տեսնէ ժողովրդի այդ տրամադրութիւնը եւ բանտարկութիւններ կընէ. կը բանտարկէ մէկը, կը թշնամացնէ եւ կամ կը զայրացնէ 10 մարդ։ Եւ այդպիսի տասնեակներ քանի՜ քանի՜ հատ կան...

ՀԱՅԿԱԶՆ·

Մարզուան, 20 ապրիլ 1893·

Եւրոպայի մէջ ամէն կողմեր լիքն են թատրոններ եւ օպերաներ, ուր մասնագէտ արտիստներ ամեն օր զանազան ներկայացումներ կուտան, որոնք ժողովուրդը կը կրթեն. այս վերջինը յայտնի վճարով մը կրնայ օգտուիլ այդպիսի ներկայացումներէ։ Իսկ մենք տաճկաստանցիներս թէեւ այդպիսի հիմնարկութիւններ չունինք, բայց պէտք է խոստովանիլ՝ որ շնորհիւ մեր բարեխնամ սուլթանի կառավարութեան ամեն օր ձրի կը տեսնենք այդպիսի կոմեդիաներ, որ, շիտակը, Թուրք կառավարութիւնը շատ յաջող կերպով կը կատարէ. միայն սա փոքրիկ տարբերութեամբ որ Եւրոպայի մէջ ժողովուրդը կրթելու, սիրտը ազնուացնելու, հոգին բար-

ձըրացնելու համար կը լինին այդ բոլորը, իսկ այստեղ ճնշելու, աւելի եւս ստրկացնելու, մահուան վիհը տապալելու համար եւ հետեւաբար նորա սիրտը արդար զայրոյթով լցնելու անարդար ու խռովարար կառավարութեան դէմ. . . Ամէն օր Թուրք կառավարութեան խաղացած կոմէդիներէ մի մի վարագոյր կը բացուէ և ինչ կը տեսնենք. այստեղ հարստահարութիւնք, հալածանք անչափ ու անհամար, այնտեղ արիւնահեղ կռիւներ ժամերի տեւողութեամբ. մէկ կողմը բռնաբարութիւնք, առեւանգութիւնք, միւս կողմը քաղաք, գիւղ, դպրոց, տուն, արտ հրդեհել, աւերել, քանդել: Այս օրերս ալ մի վարագոյր բացուեցաւ. պատմենք տեսածնիս. սուլթանի կառավարութիւնը սկսաւ բարեկարգել երկիրը, հրաժարեցնելով քաղաքներու կառավարիչները, գայմագամները եւ այլն:

Ամասիոյ միւթեսարիֆը պաշտօնանկ ընելով նորա տեղը բերին Մարաշի հանրածանօթ բռնակալ կեղեքիչ միւթէսարիֆ Նազըմ փաշան, որ շատերուն յայտնի է նոյն քաղաքի մէջ հարիւրաւոր անմեղ հայ բանտարկեալներու գլխին բերած փորձանքներով և մինչեւ հիմա առանց փաստ մը, ապացոյց մը ձեռք անցուցած ըլլալու՝ մութ ու խոնաւ բանտերու մէջ կը պահէ՝ անոնց վրայ ի գործ դնելով խիստ ճնշումներ ու տանջանքներ: Քէօփրիւլիի գաղանաբարոյ ընթացքով նշանաւոր գայմագամը Զիլէ ղրկուեցաւ նոյն պաշտօնով. նորա տեղը իր նախորդի այդ յատկութիւնները գերազանցող մէկ ուրիշը եկաւ: Զորումի գայմագամը, որ հաստ փայտերով մեր անմեղ բանտարկեալները կը գանակոծէր բարբարոսաբար իր հաճոյքի համար, այն տեղէն հանուելով ուրիշ պաշտօնի կոչուեցաւ եւ նորա տեղը աւելի բարբարոսը եկաւ: Կեսարիոյ միւթէսարիֆը կայսերական. . . պատուանշանով վարձատրուեցաւ Թուրք ամբոխը հայոց դէմ դրդելու արիւնահեղ կռւի ու կոտորածի դերը յաջողութեամբ կատարած ըլլալուն համար: Տեղւոյս գայմագամը պաշտօնանկ ընելով նորա տեղը նշանակուեցաւ ծանօթ "էշխիա" Խուսրեվի ընկերներէն մին՝ չէրքէզ աւազակ Պէքիր փաշան, որ ասկէ առաջ Պաֆրայի եւ Զարշամպայի գայմագամութիւն ըրած է եւ յիշեալ տեղերը գայմագամութիւն ըրած ժամանակը թէ ինչ չարագործութիւններ գործած է՝ շատերին յայտնի է: Քանի այս գայմագամը եկեր է, իր լեռնային աւազակութեան ընկերները սկսեր են քաղաքս թափուիլ. մի քանիները, որ յայտնի արիւնարբու ոճրագործներ են, զինեալ արձակ համարձակ կը պտտին քաղքի մէջ: Գայմագամի իբրեւ օգնական եկած է նաև հայազգի Լրտես Մարտիրոս Միրիճանեանը. այս երկուքը միացած՝ օրերէ ի վեր ամէն ջանք ի գործ դրին երբեմն շողոքորթելով, երբեմն սպառնալիքներով, հայոց Թաղ. խորհրդի ու երեւելիներու կողմէ հանրագրութիւն մը ստորագրել տալու թէ՝ "մենք շնորհիւ սուլթանի ու նորեկ գայմագամի եւ իր օգնական Միրիճանեանի հանգիստ ենք", բայց անյաջող ելան. այս ստիպման վրայ Թաղ. խորհուրդը հրաժարեցաւ. Հայ աղաները մէկ կողմ քաշուեցան. . . Նոյն օրը Հայ երեւելիները քովը կանչելով կը յայտնէ թէ սուլթանը ամենքի համար Ներում շնորհած է, հետեւաբար քաղքիս մէջ փախստականներ որ կան մինչեւ 10 օր երեւան թող ելնեն ու գան յանձնուին կառավարութեան. "վալլահի պիլլահի" չի պիտի բանտարկեմ, թող պիտի տամ. . . եւ եթէ մինչեւ որոշեալ օրը չը գան չը յանձնուին, հարկադրուած պիտի լինի բոլոր տուները խուզարկել. . . Զարմանալի բան. եթէ սուլթանը Ներում արած է, ուրեմն ինչ պէտք փախստականներու երթալ յանձնուիլը. դարձեալ, եթէ ներում եղած է՝ ինչու՞ օր որոշել, եւ եթէ մինչեւ որոշեալ օրը չերթան չը յանձնուին, ինչու՞ տուները վերստին խուզարկելու սպառնալիքներ կարդալ. այս ինչ կը նշանակէ. արդեօք կը կարծէ աւազակ գայմագամը թէ՝ կրնայ խաբել կամ վախցնել մեզ, յեղափոխականներիս, այդպիսի յիմարութիւններով. մենք այդ տեսակ խոստումներ, սպառնալիքներ շատ ենք տեսել. այդ ձեւերի մօտան արդէն անցած է. . . .

Մայիս 19-ին, ցորեկ ժամանակ Շահպէնտերեան դաւաճան մատնիչի վրայ եղած սպանման փորձէն մատնիչը մեռած չէ: Սպանման փորձէն կէս ժամ վերջը մատնիչը ոստիկաններով շրջապատուած կառավարութեան դուռը տանելով կը խօսեցնեն. այս անգամ եւս մատնութիւններ կանէ, ասելով որ այստեղ իբր թէ Ռուսաստանէն եկած փախստականներ կան, անոնք են այս բոլոր խառնակութիւններ անել տուողները. այդ փախըստականները հայ հարուստներու տուները կը պահուեն: Ասոր վրայ գայմագամը հայ հարուստները կը կանչէ և հայհոյանքներ թափելով ու սպառնալով կըսէ. "Դուք դողեր, աւազակներ, տէօլվէթ խայինիներ էք, փախստականներ կը պահէք եղեր ձեր տուները. . . անպատճառ այդ մարդիկը պիտի յանձնէք, ապա թէ ոչ ձեզ պիտի բանտարկեմ, աքսոր պիտի ուղարկեմ, ամէն բան պիտի ընեմ ձեզի". . . Տասը օր պայմանաժամը, ու անցեր և արդէն, 8 օր եւս կաւելցնէ, որ եթէ 8 օրէն ալ չը տանին իրեն յանձնեն, խուզարկութիւններ պիտի ընէր բոլոր հայ հարուստները պիտի բանտարկէ եղեր: Այս օրէն սկսեալ ամէն փողոցներու անկիւնները տաս-տասը զինեալ զինուորներ կը սպասեն մինչեւ առաւօտ՝ փախստականները բռնելու նպատակով, երբ վերջիններս չի փոխադրուին մէկ տունէ միւսը: Անխելք գայմագամ, չը գիտեր որ իր անօթի զինուորները զինեալ մարդ տեսածնուն պէս 45-50-ը մէկէն իրենց հրացանները ու ֆէսէրը ձգած կը փախչին: Հայ հարուստները միացած բողոք մը խմբագրելով հեռագրով մը յայտնեցին կայսերական պալատ. . . Ահա այս ամենքը բարենորոգումներ են Թուրք կառավարութեան յատուկ:

Սպանուած մատնիչ Սահակ Բագրատունի եւ նոյնպէս սպանուած յայտնի մատնիչ Խրմլեան Հաճի Յակոբի ընտանեացը սուլթանը երեքական ոսկի ամսական յատկացուցեր է: Մայիս 21-ին ցորեկ ժամանակ ռէվոլվերի երկու հարուածներով սպանուեցաւ գայմագամի օգնական մատնիչ-լըրտես Մարտիրոս Միրիճանեանը: Ոչ մի ձերբակալութիւն չեղաւ դեռ այս առթիւ. կեդրոնական կառավարութեան հրահանգին կը սպասեն: Այս սպանութեան լուրը կառավարութեան հասնելուն պէս՝ խելակորոյս նա ի զէն կոչելով զինուորները՝ կառավարութեան ապարանքին չորս կողմը շրջապատել կուտայ վախնալով, ու գուցէ յեղափոխականները գան ու ապարանքը կոխեն: Այսպէս շրջապատուած մէկ ժամ եւ աւելի մնալէ

յետոյ միայն, երբ կը տեսնեն թէ եկող գացող չկայ սպանութեան վայրը կեղծ քննութիւններ անելու: Եղած քննութիւնները ոչ մի արդիւնք չը տուին: Տէրօրը ապաւ է: Այս սպանութիւնը անհուն, աննկարագրելի աստիճան ահ ու սարսափ ձգեց կառավարութեան վրայ, իսկ ժողովուրդը նոյնչափ եւ թերեւս աւելի ալ հրճուեցաւ, որովհետեւ այդ վատաբարոյ լըրտեսի փնասները շատ են եղեր ամէ կողմ խեղճ ժողովրդի գլխին. . . Չը մոռանամ ասել որ այդ օրէն ըսկըսեալ՝ զինւորները զինեալ խումբ խումբ կը պտտին փողոցները ցորեկ ու գիշեր անընդհատ՝ 50-100 հոգի:

ԽԱՐԱԶԱՆ·

Ամասիա, 3 ապրիլ 1893·

Ժողովրդային յուզումն ներքնապէս հետզհետէ աւելի կը սաստկանայ. իւրաքանչիւր հայի սիրտ անհանդարտութեան մատնուած՝ առ այժմ հանդարտութեամբ կը տանի թուրք հասարակութեան կողմէ կրած ծանրածանր թշնամանաց. հառաչանօք և տխրութեամբ կը դիտէ կատարուած զըկանքները եւ բարբարոսութիւնները՝ որք թերեւս ի գործ դրուելիք բարբարոսութեանց նախատօնակն են միայն:

Շուկայի խանութպանք այնչափ համարձակութիւն չունին իրենց յաճախորդաց հետ սակարկութիւն ըրած միջոցին, որչափ կառավարական պաշտօնեաները իրենց պաշտօնատեղեաց մէջ:

Միւթէսարրըֆ էֆէնտին Հալիմ Հաֆըզի խնդրոյ մը համար իֆատէն առնելիք պահուն քննութիւնը ընդմիջելով՝ մերթ ընդ մերթ ուրիշի հետ կաշառքի սակարկութիւնը ամփոփնդելու կը ջանայ. “Էթմէ էֆէնտի, հէրիֆ ֆուգարա տըր, պունտան զիատէ վէրմէյէ գուտրէթի եօգ տըր„ (մի ըներ էֆէնտի, մարդն աղքատ է, ասկէ աւելի վճարելու կարողութիւն չունի) կըսէ միջնորդը. իսկ սա “խայիր օլմազ, թէքմիլ կէթիրմէլի, եօգսա քէյֆինիզէ„ (ոչ, չը լինիր, ամբողջ բերելու է, թէ ոչ ձեր քէյֆին) կը պատասխանէ: Այսպէս նախորդին քննութիւնը ընդմիջելով, կաշառքի դատավարութեան կը ձեռնարկէ:

Փետրուար 14-ին հայք ըստ վաղեմի սովորութեան մեծ պահոց առաջին կիւրակին քաղաքէս ժամ մը հեռու ս. Թորոսի գերեզմանը կայցելեն. այս տարի սակաւաթիւ հայեր միայն եղած էին յայց, բայց ընդհակառակն բազմաթիւ թուրք երիտասարդք թելադրուած եւ հրահանգուած իրենց ծնողներէն՝ դանակ ու հրացան նախապատրաստած կը դիմեն անդր հայերը բըռնաբարելու, ծեծելու. և կը յաջողին զոհել իրենց վայրենութեանց երկու հայ երիտասարդ, որոց մին ազդրէն կը վիրաւորուի, իսկ միւսը կերած ծեծին ազդեցութենէն՝ ամիս մը հիւանդութեամբ տառապելէն յետոյ՝ երկուսն ալ կը մեռնին: Նոյն օրը Թահրիրաթ միւտիրի Հիլմի պէյ, պտոյտի եղած ըլլալով՝ երբ դէպքին վայրը կը հասնի, չարագործներին կը բռնէ և կը յանձնէ ոստիկանի մը իբր բանտ դնելու. բայց ոստիկանն նախապէս հազարապետէն անմեղ հայերը զըպարտանօք բանտարկելու և չարագործ թուրքերը ազատ համարձակ թողնելու համար ընդունած հրամանին համեմատ՝ ճանապարհին ոճրագործներին ազատ կարձակէ:

Փետրուար 16-ին Աղճեան Համբարձում երիտասարդը կառքի ձիեր վարժեցնելու համար երբ քաղաքէս քառորդ ժամ հեռու դաշտավայր մը կերթայ՝ նախորդ միւթէսարրըֆին ծառաներէն մին հրաղէն պարպելով ձիերն կը խրտչեցնէ: Համբարձում կը խնդրէ դադրեցնել, բայց թուրքն մտիկ չընելով կը շարունակէ ատրճանակով օդը թնդացնել. Հայը կերկրորդէ իր աղաչանքը. յանժամ սա զայրանալով “կեավուր տահա սէօյլէ՞րսուն„ (կեավուր դեռ կը խօսի՞ս) ըսելով՝ կը յարձակի խեղճ երիտասարդին վրայ և դաշոյնի հարուածներով կը վիրաւորէ զնա որ մի քանի օր յետոյ կը մեռնի: Կառավարութիւնն շնորհիւ միւթէսարըֆին կը ջանայ աչք գոցել իր քթին տակ կատարուած այս ոճրագործութեան, բայց սպանելոյն ծնողաց բողոքանաց վրայ կը ստիպուի բանտարկել մարդասպանը, անշուշտ մօտ ժամանակէն ազատ արձակելու համար. էհ, թուրք ոճրագործներու համար միթէ պատիժ կա՞յ. նամանաւանդ որ սա միւթէսարըֆի ալ ծառայ է:

Մարտ 12-ին մզկիթներու մէջ խլամ մոլեռանդ կրօնաւորները ի լուր ժողովրդեան կը քարոզեն:

“Ո՛վ հաւատացեալք, հայերը մեզ ցարդ աւանդ յանձնուած էին, սակայն այժմ պէտք է զանոնք ապըստամբ ճանչնանք. ինչ որ պահանջ ունիք անոնց վրայ փութով գանձէք և ինչ որ պարտիք՝ մի վճարէք, զի կեավուրին ստացուածքն հալալ է, նամանաւանդ որ կառավարութիւնն կաջակցի ձեզ ձեր պարտուց դիմադրելու եւ նոցա դէմ կարելի եղած զըկանքն ի գործ դընելու„ և այլն:

Այն հրահանգն գիւղացւոց ալ հաղորդելէն՝ զատ կառավարութենէն ալ յատուկ պատուէր տրուած է հայեր չընդունել իրենց գիւղեր. եթէ ծանօթ եւ բարեկամ ալ լինին կապելով եւ չըմեռնելու աստիճան ծեծելով բերել կառավարութեան յանձնել:

Այս պարագային ծանրակէտ հետեւանքներն օրէ օր երեւան կուգան, որոց յիշեմք մի քանին:

Սարսափահար եղած մի կարգ դէպքերէն հայեր այլ եւս չէնհամարձակիր գիւղեր երթալ. նոյնպէս անվճար կը մնան շատ հայերու գիւղացւոց վրայ ունեցած պահանջները, որով կասկած չը կայ, մօտալուտ աղքատութիւն և կարօտութիւն կը սպառնայ բազմաթիւ հայերու:

Այս ամեն պարագաներու մէջ հայերու վրայ կը սաստկանայ արքունական տրոց գանձումը: Ամէն օր պակաս չեն տուրքի համար բանտարկուող հայեր, որոնք արդէն օրապահիկնին ճարելու անբաւական, մեծապէս կը տառապին սաստկապահանջ հարկահաւաքներու ձեռքերէն:

Սուլթանի կառավարութիւնը ցարդ ձեռքին տակ ունեցած լրտեսներէ ու մատնիչներէ ունայնաձեռն եւ յուսահատ՝ մեծաւ փութաջանութեամբ կազմեց հայ լրտեսներու խումբ մը տուներուն մէջ խօսուածներն կառավարութեան հաղորդելու եւ փախստական հայեր գտնելու սին գաղափարով: Լրտեսներու և լրտեսուհիներու մեծափարթամ կառավարութեան կողմանէ խոստում եղած է 300 ոսկի, եթէ յաջողին փախստական հայ մը գտնելու:

Ամսոյս 25-ին քաղաքական յանցանաց զըպարտութեամբ բանտարկեալ հայերէ ոմանք ազատ արձակուեցան: Կըսուի թէ խեղճերը կայսեր ներողութեան արժանացան. անմեղներու ներո՛ւմ. ի՞նչ զարմանալի բան: Ստոյգ աղ-

բիւրեկ կը քաղեմք թէ սոյն աղատման հրամանագիրը քանի մը օր առաջ հասած է. բայց այս ներողութիւնը բանտարկելոց ծախելու նպատակաւ յաջողած են քանի մ՚ օր յետաձգել՝ շատերէն կաշառք ընդունելու եւ ապա արձակելու. նախապէս երաշխաւոր (մուսատտագ, վաւերացեալ) առնելով եւ երդուեցնելով որ հաւատարիմ գտնուին սուլթանին, օտարոտի խօսքերու չանսան և փախստականները գտնեն:

Շուկաներու մէջ գիշերապահ դնելու սովորութիւն կայ շատ ժամանակէ ի վեր, զոր կը վարձատրեն խանութպանք. այժմ երկու ամսէ ի վեր թաղերու մէջ ալ այդ սովորութիւնը մտաւ. դէշ չէ կարծեմ այս՝ բնակչաց գիշերային հանգստութիւնը պահպանելու համար: Սակայն այս պարտականութիւնը արդեօք ոստիկանութեան չը՞ պատկանիր. և գոնէ եթէ ոստիկանաց պակասութիւն կայ, կառավարութիւնը պարտաւոր չէ՞ այդ գիշերապահաց ամսամթոշակն վճարել ինքը, որ անթիւ տրոց վրայ զայս եւս հասարակութեան վրայ ծանրացուցին, տան գլուխ ամսական 2 դահեկանէն մինչեւ վեց դահեկան պահանջելով: Եթէ ժողովուրդն իր կեանք, պատիւ և ստացուածքն ինքն իր ձեռքով պիտի պաշտպանէ եւ պահպանէ այլ եւս կառավարութեան ինչ կը մնայ ժողովրդեան նկատմամբ... Արդեօք 61-րդ յօդուածի տրամադրութեան արդեանց մին ալ այս էր, զոր եւրոպական վեց մեծ պետութիւնք երաշխաւորեցին. . . ԱՐԳՈՍ·

ՀԵՐՔՈՒՄ·

Յայտնի շուկայական թերթը, որի անունը տալ, ի հարկէ, անպատուութիւն ենք համարում մեզ համար, վաղուց արդէն բոլորովին ձանձրացուցիչ է դարձել, բոլորովին անհամացել է իր անընդհատ կատաղի, միօրինակ, տգէտ յարձակումներով «Հնչակի», Հնչակեան կուսակցութեան և Հնչակեանների դէմ: Զը գիտենք, թէ ինչով պէտք է լքցներ նրա ողորմելի թերթիկներն իր անձարակ «խմբագիրը», եթէ «Հնչակի» վրա խօսելու չը լինէր: Այդ թերթը, իրան յատուկ բարոյականի հետ ներդաշնակվելով, որքան անգամ արդէն ճգնել է հաւատացնել հասարակութեան, թէ թիւթիւնճիէֆը հնչակեան է եղել, մի բան, որ «պոչաւոր» սուտ է. մինչդեռ ճշմարտութիւնն այն է, որ «Ապլղարիպ»-թիւթիւնճիէֆ մատնիչը երկար տարիների ընթացքում վերոյիշած թերթի գլխաւոր աշխատակիցն է եղել, որի անձուռնի, տգեղ գրուածքների անունները մինչեւ հիմա էլ գեղեցկանում են նոյն թերթի յայտարարական բաժնում:

Վերջին ամիսներս էլ այդ անգրագէտ «խմբագիրը» սաստիկ հիասթափված է երեւում՝ որ Կեսարիայի արիւնահեղ դէպքի պարագլուխները հնչակեաններ են եղել: Եւ ահա կարդացած լինելով անգլիական մի լրագրում, թէ Կեսարիայի դէպքի պարագլուխ՝ Անտոն Ռշտունին յայտնութիւններ է արել զրպարտութիւններով հարուստ թերթի «խմբագիրը», որին ուրիշի գափնիները բնաւ քուն չեն տալիս, այդ յայտնութիւններ խօսքը մատնութեան գոյնով է ներկում՝ այդպիսով ստութեամբ, անբարեխղճութեամբ արատաւորելով մէկ անձնուրաց գործիչի անունը, որին թիւրքը կառավարութիւնը փորձել է թունաւորել և որ մինչեւ այժմ ամենախիստ տանջանքների տակ է թիւրքական բանտերում: Ազգասիրութիւն ծախող թերթի այդ գեղեցիկ վարմունքի պատճառը հանելուկ չէ. նախ՝ պ. «խմբագիրն» անձնական թշնամութիւն ունի Ռշտունու դէմ եւ երկրորդ՝ Ռշտունին հնչակեան է: Թէ Ռշտունին որպիսի յայտնութիւններ է արել, ամենքը կարող են իմանալ «Հնչակի» ներկայ տարեշրջանի Nr 3-ից, անվերջերը ու ծափահարութեան արժանի յայտնութիւններ, որոնք կարող են միայն պարծանք ու պատիւ բերել նրան, որոնք էլ ծանր նախադուշակութիւններ ու երկիւղներ ներշնչեցին թիւրք կառավարութեան: Այդպիսի յայտնութիւններով հարցաքննութեան կամ դատարանի առջեւ յեղափոխականն իսկապէս շարունակում է դարձեալ գնահատելի ծառայութիւն տալ գործին:

Մենք ստիպված ենք դնել այստեղ ներկայ հերքումը միայն նախազգուշացնելու համար հայ հասարակութեան այն մասին, որ ամեն-մի մարդու ամեն-մի տպագրական խօսքին կարող է պարզամտութեամբ հաւատ ընծայել:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹՐՔԱՑԻԼ ՊԱՏԿԱՆԵՆ

[ԳԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ]

(Շարունակութիւն Nr 3-ից)

Աւատական կարգերի անկումը ժողովրդային ընդհանրութեանը հանելով պատմական-հասարակական բեմի վրա, հէնց այդ պատճառով էլ այդ ընդհանրութեան կեանքի ուսումնասիրութեան պահանջի հետ միատեղ առաջացրեց նաեւ ազգայնութեան խնդիրը:

Աւատական կարգերն իրանց տիրապետութեան ժամանակ ստեղծել էին կալուածատիրական իշխանութեան նեղ սահմաններ: Իւրաքանչիւր աղնւականի ձեռքի տակ գտնված ժողովրդային բազմութիւնը, որ գիւղացի էր նրա կալուածքում եւ կամ արհեստաւոր նրա հողատիրութեան սահմաններում՝ բոլորովին զատված ու անջատ էր մէկ ուրիշ աղնւականի կալուածքում աշխատող ժողովրդային բազմութիւնից, որի հետ նա չունէր ոչ մի կապ՝ չունենալով իրար մէջ ոչ մի նիւթական յարաբերութիւն: Աւատականութեան տնտեսական պայմաններից ծագած այդ բնական անջատութիւնն եւս աւելի էր մեկուսացնում միեւնոյն ժողովրդի զանազան մասերը մէկը միւսից շնորհով նաեւ այն յաճախակի գժտութիւնների, միջադէպքերի, ընդհարումների, որ տեղի էին ունենում այլ եւ այլ աղնւականների մէջ, եւ այդպիսով այդ աղնւականներն աւելի էին զարգացնում իրանց իշխանութեան տակ գտնված ժողովրդի թշնամութիւնը դէպի մէկ ուրիշ աղնւականին պատկանող ժողովուրդը: Այդ կերպով միեւնոյն ազգը բաժան-բաժան էր նոյն իսկ իր մէջ, իւրաքանչիւր նեղ բայօնը, սահմանները լինելով միմեանցից անջատ աւատական իշխանների կալուածքները: Բայց աւատական կարգերի անկ-

ման հետ՝ վերանալով նաեւ ժողովրդային զանազան մասերի բաժան-բաժան լինելը, անջատութեան այդ պատճառները եւս, սկսան տեղի ունենալ յայտնի փոխադարձ հասարակական յարաբերութիւններ այդ մասի մէջ։ Միեւնոյն ազգի այդ զանազան մասերը ժամանակի ընթացքում սկսան կորցնել իրանց գաւառական անկախութիւնը շնորհով այն հանգամանքի, որ արդիւնաբերողութեան նոր, կապիտալիստական կերպերը սկսան կենտրոնացնել արդիւնաբերական միջոցները, որ անցնում էին աւելի ու աւելի սակաւաթիւ անհատների ձեռքը, եւ առաջ իրարից անջատ մասերի նիւթական ու հասարակական յարաբերութիւնները սկսան աւելի ու աւելի բազմանալ ու սերտանալ։ Նախկին գաւառային անջատութիւնն այլ եւս պէտք է վերանար եւ իրարից անջատ մասերի միմեանց տարբեր օրէնքները, տարբեր շահերը, կառավարչական տարբեր կերպերը սկսան տեղի տալ քաղաքական կենտրոնացման, մէկ, անմիջական ու ընդհանուր կառավարութեան իրաւասութեան տակ անցան այդ մասերը, ենթարկվեցան ընդհանուր, միօրինակ օրէնդրութեան եւ նրանց մէջ գոյացան հասարակական-քաղաքական ու տնտեսական՝ առաւել կամ պակաս աստիճաններով՝ ընդհանուր շահեր։ Ազգի զանազան, առաջ անջատ ու միմեանցից անկախ մասերն ի միամիտվեցան, կազմեցին մէկ ամբողջութիւն՝ կապված իրար հետ նիւթական, իրաւական, քաղաքական սերտ եւ ընդհանուր յարաբերութիւններով։ Ժամանակակից իր մտք վ ու նշանակութեամբ ազգութիւն արդէն ծագել էր։

Հասարակական-քաղաքական ու նիւթական նոր յարաբերութիւնների զօրութեամբ՝ միտքը ստացաւ մի նոր ուղղութիւն եւս, հոգացողութեան ու մտածողութեան մի նոր առարկայ եւս։ Մէկ ազգի մէջ մտքի գլխաւոր շեշտերից մէկը, որ մերթ ընդ մերթ յայտնվում էր ամենագլխաւորը, դարձաւ — հոգալ ազգի պահպանութեան, նրա ծաղկման, նրա զօրութեան, նրա գերազանցութեան մասին միւս ազգերի վրա եւ ամրապնդել ու ընդարձակել նրա պատմական դերը։ Պարզ է, որ մտքի այդ ուղղութիւնից անպատճառ պէտք է ծնունդ առնէր ազգայնութեան գաղափարը։ Եւ ահա տեսնում ենք, որ անցեալ դարու վերջերը եւ այս դարու ըսկզբները քաղաքակրթված ազգերի մէջ սկսվում է առաջանալ մի նոր երեւոյթ, որ ուղղակի արդիւնք էր ազգայնութեան գաղափարի։ Այդ երեւոյթն ուրիշ ազգերի դէմ իրանց մղած պատերազմների ազգային կերպարանքն է, որ դեռ Նապոլէոն I-ից առաջ, որպէս եւ նրա ուժգին հարուածների միջոցին նկատվեցաւ Եւրոպայի զանազան ազգերի մէջ։ Այո, ի հարկէ, այդ պատերազմների շարժառիթն ու պատճառներն ազգի նիւթական ու քաղաքական շահերն էին, բայց այդ շահերի համար մղված կռիւն այժմ այլ եւս չէր ստանում, օրինակ, իր միջնադարեան կրօնական կերպարանքը, կեղեւը։ — հասարակական ու նիւթական նոր յարաբերութիւնների շնորհով կրօնքն այլ եւս դադարել էր խաղալ իր հասարակական նախկին դերը։ Նիւթական, քաղաքական շահերի համար մղված կռիւը սկսել էր ըստանալ այժմ ազգային կռի կերպարանք, կեղեւ։ Պէտք է ասել սակայն, որ պատերազմների այդ կերպարանք ստանալն աղգութիւնների նիւթական նոր պայմանների արդիւնք էր, նրանց նոր տեսակ՝ ընդհանուր ազգային կացութեան հետեւանք, նրանց զարթնելու, ազգային ինքնաճանաչութեան ու ինքնագիտակցութեան առաջին բոպէների ու առաջին ծաղկման արգասիք։ Դա՝ ազգերի նոր կազմութեան ռոմանտիկական *) ըսկիզբն էր, եւ միայն այդ սկզբներում կարող էին պատերազմները ազգային կերպարանք ընդունել։ բայց վերջն ազգերի զարգացման հետ նա, այդ երեւոյթը, պէտք է վերանար բարձր զարգացում ունեցող ազգերի միջից և անցնէր դրանցից աւելի քիչ քաղաքակրթված ազգերի մէջ, մինչև որ ժամանակի ընթացքում այս վերջիններն էլ կրկորցնեն իրանց պատերազմների այդ կերպարանքը։

Այսպէս, ժողովրդի ընդհանրութեան կենցաղի ուսումնասիրութիւնը եւ ազգայնութեան գաղափարը պատմութեան մէջ երեւան են գալիս գրեթէ միաժամանակ և իրանց ծագման սկզբներում կարծես իրար համար լրացուցիչ գերեր են խաղում։ Բուրժուազիայի, իբրեւ դասակարգի, գերիշխանութեան հաստատման հետ, առաջանալով ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան պահանջը և ազգայնութեան գաղափարը, մարդկութեան առհասարակ այդ ընդհանուր վերածնութեան ժամանակում առաջանում է գրականութեան մէջ մի նոր ուղղութիւն, նոր դպրոց, այն է ռոմանտիկան, իբրեւ ուղղակի արդիւնք պատմական բոպէի իմաստի, ոգու, ձգտումների եւ հասարակական նոր յարաբերութիւնների։

(ԿԸ շարունակվէ) ԱԿՆ — ԵԱՆՑ։

*) Այդ խօսքն այստեղ գործածված է փոխաբերական մտքով, այսինքն յուսալից, խոստացող, գրաւիչ։ Ռոմանտիկական դպրոց դա՝ գրականութեան մի տեսակն է, որի հակառակ տեսակը կոչվում է կլասիկական։ Այս վերջին տեսակի կանոնների հիմնողները հին ժամանակների եւ ապա XVII-րդ դարու գրողներն են. այս վերջինների ուղղութիւնը կոչվում է կեղծ կլասիկական (pseudo-classique)։ Ռոմանտիկական դպրոցը հակառակեց այդ կանոններին, բարեփոխեց եւ գրական ձեւերի ու նիւթի ընտրութեան ազատութիւն հռչակեց։

Լոյս տեսաւ բրօշիւրի դիրքով

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՖԷՐԴԻՆԱՆԴ ԼԱՍՍԱԼԻ.

Թարգմանութիւն.

ՄԷԿ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

«ՀՆՉԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՒ

ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏԿԵՐՈՎ.

Գինը 40 սանտիմ

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և թղթադրամ գումարներ ուղարկել հետեւեալ հասցէով։—
Athènes. (Grèce).—M. Beniard. Poste restante.

Իսկ դրամական մանդատները — mandat — ուղարկել հետեւեալ հասցէով։—
Eaux-Vives. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Էթէնք. Հայկական ազատ տպարան։